ԱԼԻԵՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ԻՐԱՏԵՍ ԼԻՆԵԼ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՎԵԼ ՋԻՋՈՒՄՆԵՐԻ

Օրերս Ադրբեջանի նախագահ Հ.Ալիեւն ընդունել է ամերիկացի մի խումբ կոնգրեսականների, որոնց հետ տեսակցության ընթացքում ասել է, որ Ղարաբաղյան հարցի լուծման համար Հայաստանը պետք է իրատեսություն հանդես բերի եւ պատրաստվի զիջումների, վկայակոչելով թուրքական «Անատոլու» գործակալությանը՝ հաղորդել է Ստամբուլի «Մարմարա» օրաթերթը: Ալիեւն ավելացրել է, որ Հայաստանն ու Ադրբեջանը կարող են երկար ժամանակ կռիվ-կռիվի խաղաղ ապրել՝ «եթե տարածաշրջանում մնայուն կայունություն հաստատվի»: Ղարաբաղի հարցի լուծումը, ըստ Ալիեւի, հնարավոր է, եթե Հայաստանն ընդունի Լիսաբոնյան գագաթաժողովի ընդունած սկզբունքներն ու Մինսկի խմբի համանախագահների առաջարկները: Ըստ այդ սկզբունքների, հարցը պետք է լուծվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության «լույսի տակ» եւ դրա փոխարեն Ադրբեջանը Ղարաբաղի համար կճանաչի «հնարավոր ամենաբարձր ինքնավարության իրավունք»: Ալիեւը նշել է, որ նույն առաջարկներն արվել են Քլինթոնի կողմից իրենց վաշինգտոնյան հանդիպման ժամանակ: Նույն նպատակով պատրաստված փաստաթղթերին նեցուկ է կանգնում նաեւ Թուրքիան: Նշված փաստաթղթերի համաձայն, առաջին հերթին հայերը պետք է հեռանան Ղարաբաղի սահմաններից դուրս գրաված հողամասերից, որոնց վրա պետք է տեղակայվեն միջազգային խաղաղարար ուժեր:

«Անատոլուն» հաղորդում է նաեւ, որ «Վերին Ղարաբաղի ազերի բնակչությունը բողոք է ներկայացրել նախագահական այն ընտրությունների անցկացման դեմ, որոնք սեպտեմբերի 1-ին կկայանան Ղարաբաղում»: Վերին Ղարաբաղ հորչորչվող վարչական տարածքի ղեկավար Նիզամի Բահմանովն այդ բողոքագիրը հղել է ԵԱՀԿ երկրների Բաքվի դեսպանատներին: